

ՆԵՐԱՐԾՈՒՅԹ ՇԱԽԱԲԱԿՐՊՈՐԵԱՆ ԸՆ ԽՈՐԻՇՆ ՄՈՎՍԵՍԻ

«Զի Ձեւակտ եւ եմք ածու փորր եւ թուով յոյժ ընդ
փոքրու տահանեալ եւ զօրութեամբ տեսար եւ ընդ այլով
յոլով անդամ նուածեալ թագաւորութեամբ, սակաւն բա-
զում դորձք արութեան զաւանին դործեալ եւ ի մերում
աշխարհի».

(Խ. Գ. Ա. Պ. Գ.)

Աերեւ գրուած խօսքերով քերթողահայր Խորինն Մովսէս հայը
և հայութիւնը նմանեցնելով մի փոքր ածուի որակում է նրա քա-
նակի փոքրաթւութիւնը և զօրութեան տեսարութիւնը և բազմիցս
նուածուած լինելը չըջապատի հզօր պետութիւններից, բայց և չի
զանում զէթ համառօտակի յիշատակութեան առնելու իւր հայ-
րենի պատմական աշխարհում կատարուած արութեան գործերի
նշանակալից նկարագիրը:

Խորինն Մովսէս ձգում է մի թեթի, ստեղծե կարի յոյժ ու-
շագրաւ, ալեւարկ հայութնան քաղաքացիական կենցաղի, դիւա-
նական կարգերի, դիւղատնուական եղանակների և սովորութիւն-
ների վերայ, որպէս և նրա առ ուսումն և զիստութիւնը տածած
անսիրելիութեան, որոնց չուրջը և մննք՝ փոքր ինչ կանգ ևնք սո-
նելու: Պատմահօր իւր իսկ վկայութիւններով ջատագովական նկա-
րագրութիւնների մէջ զգալառէս պատկերանում է հայութեանս
երբեմնի գասուած լինելը ժամանակի քաղաքակիրթ հզօր ազգու-
թիւնների կարգում, առ որ և վասահութիւն է համարում իրեն
համեմատութեան դնելու մնաց ժամանակի լուսամիտ, յառաջազեմ
աղղերի հետ, իսկ մեր աշխարհը նրանց քաղաքակիրթ աշխարհների,
որոնցից այնքան էլ յևս մնացած չի դանում: Եւ արդարեւ սոսրի
արդէն որուած վկայութիւնները դարիս են ապացուցանելու մեր
այնժամեան կուլտուրական քաղաքականութիւնը,

Օրինակ, քաղաքացի, զիւղացի, երկրագործ, արհեստաւոր,
հոգեոր և աշխարհիկ ժողովրդի վոխացարձ յարաբերութեան շա-
հները և իրաւունքը արդարապէս պահպանած լինելու համար տես-
նում ենք ամենուրեք հաստատուած-կարգուած մինչ իսկ իրաւասու-
իրաւարարներ և ինչ ինչ բարեկարգութիւններ.—

»Իրաւարարս ի տան արքունի, իրաւարարս ի քաղաքս
և յաւանս: Հրաման տայ քաղաքացեաց մարդկան ար-
գոյ և պատիւ. լինել քան զզեզջկաց և զեղջկաց պա-
տուել զքաղաքացիս որպէս զիշխանս, և քաղաքացեաց
մի կարի առ զեղջկօքն պերճանալ, այլ եղբայրարար
զարիւ . . . (Խ. Գ. Բ. Պ. Ը. Ը.)».

Եւ պատմահայրը սքանչանալով և իւր նախնիքների օրինակելի քաղաքավարութեամբ, պարծանքով ջատագովում է իւր հայրենիքը նախարիխոտոսեան կենցաղի և քաղաքականութեան երջանիկ անցեալը՝ դրելով.—

«Եւ սիրելի էր ինձ յայնում զատ Փրկչին և զիս զնել ե առ Դոքօք յաշխարհ զմուան իմ լինել և նոցա տեսութեամբ խրախճանալ և յարդեանցու վտանգից ապրել . . . (Խ. Գ. Ա. զլ. իԲ).»

Պատմահայրը սրտի խորքից երանելով աղջի երջանիկ անցեալը, իզձ և փափաղ է յայտնում, որ այն երջանիկ օրերում ապրած լիներ. քայլ որոշէս աւետարանի ճշմարիտ աշակերտ չի էլ ուզում բաժանուած լինել Քրիստոսից, զանկանում է, որ անշուշտ Քրիստոն էլ այն ժամանակ աշխարհ եկած լիներ, որ ինքը ցնծար ոչ միայն հայրենի պահծալի փառքերի, այլև Քրիստոսի և նրա աւետարանի վայելքներով։

«Նոտ պատմահօր մեր ոմանց թագաւորների օրերով՝ յիշատակիր վեպերում, մատեաններում սովորութիւն կար արձանագրելու ժամանակի նշանակալից դործերը և այդ ամենը կատարում էին զիւանազիր մատենագիրները. —

«Որք զրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զմանանակս և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէտս և ի պատմութիւնս . . . » (Խ. Գ. Ա. զլ. Գ).

Իսկ այդպիսի զիւանազիր մատենագրները արժանանում էին թագաւորների, իշխանների, ոբարեալ ժողովրդի ու նրա գուսանների ուշադրութեանն ու յարգանքին։ —

Դիւանագիր մատենազիրների այս զքաջմունքն անուանում է «պեղսցիկ իմն մոլութիւն», յայտնելով զերմ քաղձանք և սէր ընթեանելու նրանց զրածները. իմաստնանալու և ուսանելու քաղաքական կարգեր նրանց զրուածներից։

«Դիւանազիրք մատենից ներբողականաց ի մէնջ արժանի եղնն ասից՝ ի ձեռն որոց և մեր ընթեանուն զառ ի նոցանէ շարածս բանից բառ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք և քաղաքականս ուսանիլ կարգս . . . » (Խ. Գ. Ա. զլ. Գ)։

Ահաւանիկ այն Մովսէսը, որ կշտամբում էր մեր նախնիքներին առ ուսումն ու զիտութիւնը տածած անսիրելութեան համար (սորա մասին յետոյ) յայտնասկէս խոնարհուում է իւր հայրենի աշխարհի փառքի և նրա զիւանազիր մատենազիրների փայլուն զիտութեան առաջ։

Ոչ փոքր ուշադրու է և մեր վազեմի կառավարութեան իւր ժամանակի հաղատիքութեան և դիւղատնասական եղանակի մասին եղած փոքրիկ յիշատակութիւնը:—

«Որովք այժմ դիւղից և դաւառաց և և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ դաւանին անրաւ զրուցաց մատեանք . . . » (Խ. Գ. Ա. Պլ. Գ.)

Այս փոքրիկ հատուածը յայտնաբեռ ապացուցանում է, որ անհատական և հասարակական ստացուածային շահերը պաշտպանելու պայմանների, դաշինքների համար եղել են մեծահատոր անրաւ մատեաններ, որոնց մէջ ի մասնաւորի շեշտում է պայմագաւիշանականների մասին գրելով.— «մանաւանդ որ ի սեպհական ազատութեանն է պայմագաւիշիւն . . . » Եւ ինչպէս երեաց պատմահօր ովկայութիւնից՝ այդպիսի մատեանները պահպանուած են եղել մինչեւ կորինն Մովսէսի օրերը:

Իսկ թէ Երերադորդութիւնը որսորդութիւնը և առհասարակ դիւղատնասականը ինչ աստիճանի կանոնաւորութեան և զարգացման են հասած եղել: Թէ հերեւագործ ժողովրդի և թէ պետական կառավարութեան կողմից՝ կարդալու է պատմահօր Բ. զրբի ՄԶ և ԽԱ. զլուխների հետեւալ նկարագրականները:—

«Հրամայէ (Արտաշէս) զուհմանս դիւղից և ազարակաց որոշել . . . Եւ նշանո սահմանաց հաստատեաց այսպէս:— Հրաման տալով քարինս կոմիել չորեքիւուիս և պնակաձե վոսել զմէջոն, ծածկելով յերերի և չորեքիւուիս ի վերայ յարուցանել ամրարատակս, սակաւ. ինչ բարձրադոյն յերերէ . . . Բայց ասի ի ժամանակս Արտաշիսի շղտանել երեխը անզործ յաշխարհիս Հայոց և ոչ լեռնային և ոչ զաշտային յազագս չինութեան երերիս»: «Տնկէ (Երուանդ) և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ դետոյն, և որովք ամրացուցանէ, արդելլով ի ներքս այծեմունս երազունս, և զեղանց և զեղջերուաց ազգ, և ցիոս և վարագս . . . որովք ուրախանայր թազաւորն յաւուրս որոսց»:

Զարմանալին է, որ ոչ միայն դիւղատնասականութիւնը զբուած է եղել կանոնաւոր վիճակի մէջ. այլ և բանուորական հարցը և բանւորների աշխատութեան ժամանակամիջոցը, որոնց վերաբերեալ մենք կը խօսենք յիտոյ:

Ոչ փոքր բարւոք վիճակի մէջ է եղել յինարարուկան-ձարտարապետականը «արխիտեկտուրան», որոնց կենդանի ապացուցները տակաւին կանգուն են նախկին Տուսլ-Շամիրամակերտ վա-

նում, Երուանդակերտում, Գառնոյ հրաշակերտ ամրոցում և առասարակ:

Թողնենք առ այժմ Երուանդակերտի հիասքանչ նկարագիրը՝ քաղցր է ինձ ասել . . . » որպէս և Շամիրամակերտ-Վանի-Հետարէ զհրաշալիքն ամրագունիւք ոլարսալօք . . . « որոնց հրաշակերտութեան նուիրելու ենք առանձին զլուխներ, հայ ճարտարապետութեան որպէս օրինակ քերենք Տրդատաշէն Գառնոյ ործաքար և կոփածոյ քարերով, երկաթաղամ և կապարով մածուցուած տուն և հովանոցը, որոնք դարդարուած էին մահարձաններով, սքանչելի պրօշտածքներով և բարձր քանդակներով:

«Կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր ործաքար և կոփածոյ վիմօք, երկաթաղամ և կապարով մածուցեալ, յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի պրօշտածովք, բարձր քանդակական համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և զրեալ ի նմացիշատակ իւր հելլենացի զօռք. (Խ. Գ. Բ. զլ. Դ.)

Գառնիի աւերակների մնացորդները վկայում և հաստատում են քերթողահայր Խորինն. Մովսէսի նկարագրածը և համարեան զեռ աւելիօք, որպիսիք իրենց ճարտարապետուկան զեղարուեատական յօրինուածներով զրաւել և զրաւում են Եւրոպացի հետախոյդ զիսնական ճանապարհորդների, որպէս և մեր քաջածանօթ պրօֆէսոր Պ. Մառի ուշադրութիւնը:

Այս ամենի հետ չեն խուսափել ոլատմահօր ուշադրութիւնից և մեր արեւադաշտեան ու կոտապաշտութեան ժամանակի մենենական բաղիններն, որոնք հակառակ ժամանակի հեթանոսական կուատների, հանդիսացել են անքոյթ նաւահանգիստներ և ոլատսպարաններ կարօտ, օտար սկանդուխտների տասնչականութեան որպէս յոզնած, դադրած, խոնջացած ճանապարհորդների. իսկ այդ առթիւ զրում է Խորինն-Մովսէս.—

«Տիզրան շինեաց բազին ի վերայ զերեզմանին Մաժալայ քրմասկետի ի բազնացն աւանի (Բազարան) զի՞ դոհիցն ամենայն անցաւորք վայելեսցին և ընդունիցին հիւրք երեկօթիւք . . . » (Խ. Գ. Բ. զլ. ԴԶ):

Հայ քաղաքակրթութեան աղացոյցներից մէկն էլ կըօնական բարդ կազմակերպութիւնն է, բազինների, արձանների յուղութիւնը և կրօնական պաշտօնեանների դասակարգութիւնը, որի զրուխ կանգնած էր լինում շատ անգամ սլրքայական տան անդամներից մէկը կային որպէս արքունական՝ նոյնպէս և մենենական զիւաններ, զիւանազիրներ և մատեաններ, որոնց մասին զրում է քերթողահայրը իւր Բ. զրքի ԽԸ դիմում:—

«Եւ զայս մեղ ստուդալէս պատմէ Ողիւոլ քուրմ Հանւ-
ւոյ գրող մեհենական պատմութեան»:

Նոյն Քերթողահայրը մի ուրիշ տեղ (զիրք Բ. զլ. ԿԶ.) զրում է.
«Վասն դի եկին նա (Բարդածան) այսր. օրովէս զի աշա-
կերտել զոք կարասցէ ի խուժ հեթանոսացս, և իբրև ոչ
ընկալեալ եղի. եմուտ նա յամորն յլլինի և ընթերցեալ
զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագա-
ւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւն, և վո-
խեաց զամենայն ի լեզու ասորի, որ և ապա անտի յե-
զաւ ի յոյն բան. Յորում պատմէ եւ ի մեհենիցն պա-
տմանց վերջին Տիգրանայ արքայիր . . . »:

Մեր ցարդ բերած հատուածներով Խորինն-Մուխչս յիշատա-
կելով հանդերձ մեր նախնեաց առ ուսումն և զիտութիւնը տածած
անսիրելութիւնը՝ վկայում է, որ բացի արութեան զործերից քա-
զաքակթութեան, կուլառուրայի գիտութեան և ուսման զործեր էլ
են կատարուել մեր աշխարհում:

Եւ, անշուշտ: Ե. դարի ուկեղէն դպրութիւնը, արուեստա-
կան լձերը, ջրանցքները, աղղի-աղղի շինութիւնները, որոնց հետ-
քերը մինչև այսօր կան, ունեցել են նախընթաց և աստիճանական
զարգացման ըրջան: Դրանք ապացոյց են, որ նախնի հայերը բացի
արութեան զործերից եղել են առ ուսումն ու զիտութիւնը սի-
րելութիւն տածողներ:

Մեղ թւում է, թէ քերթողահօր բողոքը հետեանք է իւր ժամա-
նակի տիսուր անցքերի ախրադոյն տպաւորութեան, իսկ այդ տպա-
ւորութիւնները նա անդրադարձել է և դէմի հին ժամանակները:

Սիօն վարդապետ

ԱՆԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Օրբելի)

II.

Գագիկը իրան շահանշահ էր համարում, և զիտէր՝
որ ինքն է հայ երկրի համախմբողն ու միացնողը. Նրա
համար պարզ էր իւր ժամանակով կատարուած Տաշիրքի
ընդարձակ նահանգի և Կարթալինիայի մի մասի Անիի
թագաւորութեան հետ միացման մեծ նշանակութիւնը.